

ումանք եւ խնդրէին հարկս արանց եղելոց¹⁾ համշիւ-
րակցաց նոցին, որ ի վաղուց այսր են: Յետ աւուրց
ինչ ոչ կարացին առնուլ կրկին, այլ յետս դարձան
ամօթալից, քանզի ոչ տեսին արժան դատաւորք քա-
ղաքիս:

Եւ աւուրքս ի պատերազմէ անտի ոմանք փա-
խըստեայ եկին այսր ի պատերազմողացն եւ զթին
քաշողացն: Զքաշողսն ի թի արկանէին է տարով վճիռ
հատեալ, եւ զեէնկիչէրիսն որ աստ գտեալ՝ ի ծովն
ընկեցեալ հրամանաւ թագաւորին. եւ որք անտի հը-
րամանաւ եկեալ էին՝ նոքա ինքնագլուխ էին աներ-
կիւղ: Եւ ի հարուածոց պատերազմին սակաւ այրս
ի Ֆռանկացն բերեալ եւ աստ ծախեալ, որոյ ի ժամ
պատերազմին զգլուխ եւ զմեծ նաւն ի ծովն հեղձու-
ցեալ և արք նաւացն ի ծովն թափեալ և մանրանաւքն
ի վերայ ծովուն զնոսին ժողովեալ, այլ ոչ ելանէր
ամենայն գերեալքն ի պատերազմէն յազգէ Ֆռանկաց
մինչ ի Մ և Բ որդի պարոնի. այլ ի նոցանէ անհամար
որ ոչ ի գիր անկանի՝ չորպաճիք եւ օտապաշիք եւ Բ
փաշա եւ այլ արս մեծամեծս տարեալ գերի ընդ իւ-
րեանս:

Կիրակի ժթ: Աւուրքս հրաման արարին արանց
ամենայն քաղաքիս՝ եթէ ոք²⁾ կամիցի գնալ ի պատե-
րազմ՝ եկեալ գնասցէ և առցէ ըռոճիկս ի թագաւորէն
յաւուրն Զ Զ ըստակ, զոր եղև իբրև արանց ԲԹ-աց,
քանզի անդէն խնդրեալ էին եւ գնացին նաւաւ:

Դչի օրս (22 Յուլիս) թագաւորն ի կերպ շրջող քա-
ղաքականի եղեալ և շուրջ եկեալ ամենայն քաղաքս՝
տեսանէր թէ զի՛նչ կայ. և հանդիպեալ ի ճանապար-
հին ընդ որ անցանէր ի շուկայսն, եւ գտեալ զմի ոմն
որ խմէր մուխ, զնա անդէն սատակեցուցեալ եւ ան-

1) այրս եղելոյ. մզով 2) եթէ ոչ. դիտարան և